«ԴՐՈՇԱԿԸ» ԵՎ ՎՏԱՐԱՆԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա.

Մինչև XIX դարի կեսը հայ ազգաբնակչությունը Արևմտյան Հայաստանում կազմում էր բացարձակ մեծամասնություն: Սա, իհարկե, անթույլատրելի էր թուրքական տրամաբանությամբ, և հակահայկական բռնություններն ուղղակի «անհրաժեշտություն» էին: Դարերի ընթացքում երկրի աշխարհիկ ու կրոնական տերերը Ղուրանի ու նրա սպասավորների միջոցով մահմեդական զանգվա-ծին ներշնչել էին, որ քրիստոնյան «գյավուր է, արժանի՝ ոտնա-հարման ու ոչնչացման»: Քրիստոնյա հպատակ ժողովուրդների ուծացումով այլևս չբավարարվող պանիսլամիստներն ու պանթուրքիստները ձեռնամուխ եղան ջարդերի բացահայտ քաղաքականությանը: «Կայսրության բոլոր ազգերը հաջորդաբար զոհ եղան Աբդուլ Համիդի եղեռնագործ կատաղության. նա հաջորդաբար մղեց նրանց մեկը մյուսի դեմ՝ գրգռելով և արծարծելով արհեստական ընդհարումներ ցեղերի և կրոնների միջև… թուրք, հայ, հույն, բուլղար, վալախ, ալբանացի, արաբ, հրեա, գրուզ, քուրդ տեսան հալածանք, աքսոր, տարագրություն և ջարդ»[1]: Թուրքիայում ազգային փոխհարաբերություններում տիրապետող ազգը՝ թուրք օսմանները, ոչ մի տեղ բնակչության գերակշռող տարրը չէր և կուլտուրապես զիջում էր հպատակ ժողովուրդներին: «Բերանն արնոտ մարդակեր» կազմակերպեց 1894-1896 թթ. կոտորածները, 1909-ին՝ Կիլիկիայի հայության ջարդերը, իսկ 1915թ. իրագործեց դարի ոճիրը՝ Մեծ եղեռնը: Ռուս մեծ մտածողը՝ Վ. Բելինսկին, իր «Գրական երազանքներում» հայտնում է հետևյալ միտքը. «Յուրաքանչյուր ժողովուրդ նախախնամության անխախտ օրենքի հետևանքով իր կյանքով պետք է արտահայտի ամբողջ մարդկության կյանքի որևէ մեկ կողմը, հակառակ դեպքում նրա գոյությունը ոչ մի բանի չի ծառա-յում»[2]: Կարծում ենք՝ ակնհայտ է, թե անցյալ դարասկզբին հայոց ցեղասպանությունն իրականացնող ժողովուրդը հանուր մարդկության կյանքի ո՛ր մեկ կողմն է ներկայացնում, իսկ «միակողմայնությունը վնասակար է ամբողջ մարդկության համար»[3]: Դարեր շարունակ օտարի հողում իրեն տեր զգացող բորենին չէր փոխել ինքնահաստատվելու իր եղանակը: Այսպես ձևակերպենք մեր՝ ճակատագրով սահմանված թշնամու իրական, բնազդային հակումը. «Շատ տարօրինակ քմահաճույք ունի իմ քաղցը. Հաճախ այն միայն ճաշից հետո է գալիս»[4]: Թուրք խուժանի վայրագությունը ըմբոստության ալիք էր բարձրացրել, համախմբել ժողովրդական վրիժառուներին: Նրանք այն հայրենասեր, քաջասիրտ

---

[1] **Լազեան Գ.,** *Հայաստան և հայ դատը դաշնագրերու մէջ, Գահիրէ 1992, էջ 64:*

[2] **Բելինսկի Վ,** *Փիլիսոփայական ընտիր երկեր, Ե., 1954, էջ 76:*

[3] *Նույն տեղում:*

[4] **Նիցշե Ֆ.,** *Այսպես խոսեց Զրադաշտը, Ե. 1990, էջ 20.*

կտրիճներն էին, որոնք, այլևս չհանդուրժելով օտարի բռնատիրական նկրտումները, զենք վերցրին, կազմեցին ոչ միայն պաշտպանական, այլև մարտական ջոկատներ՝ իրենց ընտանիքը, տունը, հայրենի հողը պաշտպանելու: Հայդուկային ինքնապաշտպանական կռիվները ծավալվեցին երկրով մեկ և իրենց պատմությամբ դարձան նույնքան բացառիկ, որքան հայ ժողովրդի նկատմամբ՝ դարի եղեռնը: ««Հայդուկ»[5] բառը, որ փոխառություն մըն է հայ լեզվին մեջ, շատոնց ծանոթ է Արևելքի մյուս ազատագրվող ժողովուրդներուն: Հույներն արդեն մեծ ծավալով մղեր էին հայդուկային շարժումներ: Անոնցմե ետք կռվի նույն մեթոդը որդեգրեցին բոլոր մյուս թրքահպատակ ազգերը՝ սերբ, բուլղար, մակեդոնացի և այլն: Բայց գուցե երբեք ժողովուրդ մը չէ ունեցեր այնքան հուզումնալից և արյունոտ արկածներ հայդուկային ասպարեզի վրա, ինչպես մենք»[6]: Եվ այսպես՝ «հայդուկ», «հայդուկային շարժում» ապա և «ֆիդայի» բառերն իրենց կերպավորմամբ դարձան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության կարևոր բաղկացուցիչ մասը:

«80-ականների հայ ազատամարտը կազմակերպվեց երկրում, գլխադաս ունեցավ արևմտահայ մտավորականությանը, կրոնական ու քաղաքական գործիչներին: Շարժման ողջ ծանրությունը իրենց ուսերի վրա տարան Վասպուրականի արծիվները, Սասնո ու Տարոնի առյուծները, Բարձր Հայքի հայրենանվեր վրիժառուները»[7]: ՀՅԴ գլխավոր գաղափարախոստեսաբան, «Դրոշակի» խմբագրության անդամ Միքայել Վարանդյանը գրում է. «Հայ հեղափոխականի, հայ ժողովրդի գործունեության թատերաբեմը երկիր մըն էր, ուր ազատության զինվորի կյանքը տարիներու և տասնյակ տարիներու ընթացքին գրեթե անդադրում Գողգոթա մըն էր, շարունակական նահատակություն: Անօրինակ միջավայր մը, ապահովաբար եզակի հեղափոխական ազգերու տարեգրության մեջ: Այդ իսկ պատճառով եզակի է և Հայոց Ազատամարտը, հայկական դրաման՝ իր մռայլ արարվածներով և իր խոլական, աննման դերակատարներով...»[8]:

Երկրի տարբեր ծագերում հզորանում էր պայքարն իրականացնող հայդուկային ջոկատների գործունեությունը՝ Մուշ, Սասուն, Վասպուրական գավառներում, Խնուսում, Կարինում և գրեթե այն բոլոր վայրերում, որտեղ հայ ազգաբնակչությունը ենթարկվում էր օսմանյան կառավարության հալածանքներին, սոցիալական ճնշմանը և տարաբնույթ բռնություններին:

---

[5] *Հայդուկ - հունգ.՝ հետևակ, բուլղ.՝ ավազակ, հեն, զինվոր ապստամբ խմբի, թուրքական բռնապետության /XV-XIXդդ./ դեմ պայքարող մարտիկ, Հայդուկների պայքարը հակաֆեոդալական էր, նպատակը՝ ազգային անկախությունն ու ազատությունը [տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 6, Ե., 1980, էջ 156]:*

[6] **Ղազարյան Հ.,** *Արևմտահայությունը ցեղասպանության տարիներին, Ե., 2001, էջ 533-534:*

[7] *Նույն տեղում, էջ 517:*

[8] **Վարանդյան Մ.,** *ՀՅ Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 182:*

Պատմական այս իրադարձությունները նպաստում են հայ ազատագրական մտքի զարգացմանը, առաջ քաշում ծրագրային-գաղափարական խնդիրների կազմակերպումն իրագործող ուժերի կազմավորման անհրաժեշտությունը: Հրապարակ իջած ազգային կուսակցությունների գործունեություն ուղղված էր նույն գործին՝ գլխավորել հայ ժողովրդի ազատագրական հեղափոխական պայքարն ընդդեմ օսմանյան բռնատիրության, երբեմն էլ՝ ցարական ինքնակալության: Ակադ. Ս. Սարինյանը ՀՅԴ-ի ծնունդն համարում է ազգային-ազատագրական շարժման տենդագին որոնումների արդյունք՝ այն անվանելով նոր տիպի կուսակցություն, միանգամայն ինքնատիպ երևույթ կուսակ-ցությունների համաշխարհային պատմության մեջ:

Դաշնակցությանը միացան այդ ժամանակ գոյություն ունեցող գրեթե բոլոր հեղափոխական խմբերն ու կազմակերպությունները: «Դա մեր ազգային ոգու հայտնությունն էր, մեր պատմության փիլիսոփայական գիտակցումը: Հեղափոխական գործունեությանը զուգընթաց, Դաշնակցությունը նշանակալից դեր խաղաց հայոց ազգային աշխարհայացքի վերափոխման ուղղությամբ: Նա վերաիմաստավորեց հայոց պատմության փիլիսոփայությունը, ստեղծեց ազատագրական պայքարի մի ամբողջական գիտություն, նորակերտեց հայոց ազգային հոգեբանությունն ու հայ մարդու բարոյական նկարագիրը»[9]: Իսկապես որ, անհրաժեշտաբար հասունացել էր պահը՝ կազմակերպական ձև տալու տարերայնորեն սկսված հայ ազատագրական շարժմանը, իսկ Դաշնակցությունն այդ իմաստով առաջիններից էր: Վասպուրականի արծիվը՝ Խրիմյան Հայրիկը, մեծ սպասելիքներով և խորը հավատով էր լցված դեպի դաշնակցու-թյունը՝ հայկական նոր ասպետականություն համարելով այն[10]: 1890թ., երբ Թիֆլիսում հիմնադրվեց Դաշնակցություն կուսակցությունը, կովկասահայությունը մեծ խանդավառությամբ տոնում էր Հայրիկի ծննդյան 70-ամյա հոբելյանը, որին սուլթանական կառավարությունը համարում էր հեղափոխական այդ բոլոր շարժումների «սավառնող ոգին», գաղափարական առաջնորդը, գործնական խորհրդատուն[11]: Նորաստեղծ կուսակցությունը 1890-ին հռչակած «Մանիֆեստ»-ում տալիս է իր իսկ բնութագիրը. «Հայ հեղափոխականների դաշնակցությունը թեև նոր է հանդես գալիս իբրև կազմակերպություն, բայց նա վաղուց գործող խմբերի միություն է, խմբերի, որոնք նույն ինքն հայ ժողովրդի ձգտումների ծնունդն են. նպատակ դնելով թրքահայ Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը՝ Դաշնակցությունը մտել է այն կռվի մեջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարության դեմ՝ ուխտելով մինչև արյան վերջին կաթիլը կռվել հայրենիքի ազատության համար…Կռվենք, ստրկական շղթաներով կաշկանդված, սուլթանական լծի տակ հեծող ժողովրդի ազատության համար:

---

[9] **Սարինյան Ս.**, *Հայ գաղափարաբանություն, Ե., 1998, էջ 65-66:*

[10] *Յուշամատեան ՀՅԴ-ն, հ.Ա, Քալիֆորնիա, 1992, էջ 2:*

[11] **Ղազարյան Հ.**, *Արևմտահայությունը ցեղասպանության նախօրյակին, Ե., 2001, էջ 596:*

Կռվենք, կռվենք մինչև վերջին շունչը: Կամ մա՛հ, կամ ազատությու՛ն»[12]: Հեղափոխության և պատերազմների այդ դարաշրջանում աննախադեպ զարգացում և տարածում ստացավ պարբերական մամուլը՝ հասարակական կյանքում դառնալով ավելի ազդեցիկ ու բազմազան: «90-ական թվականից գործող ազգային քաղաքական կուսակցություններն այժմ շատ ավելի մեծ թվով թերթեր ու ամսագրեր են հրատարակում՝ տպագիր խոսքը դարձնելով քաղաքական պայքարի անմիջական զենք»[13]: Դաշնակցության պատգամախոսն ու գաղափարակիր մարմինն է դառնում «Դրոշակը»: 1896-1897 թթ., Կովկասյան շրջանային ժողովի որոշման համաձայն, «Դրոշակի» խմբագրությունը պիտի դառնար դաշնակցական արտասահմանյան ներկայացուցիչ բյուրոն: Իբրև Արևմտյան բյուրո՝ Ժնևի խմբակը ՀՅԴ-ի կազմակերպչական և քարոզչական գործունեության մեջ միշտ էլ որոշիչ դեր է ունեցել, որի հետ տնական կապի մեջ են եղել Թիֆլիսի բյուրոն,Պոլսի, Ատրպատականի հեղափոխական մարմիններն ու գործիչները: Հր. Տասնապետյանը բարձր է գնահատում «Դրոշակի»՝ գաղափարական առաջնորդի դերն ու նշանակությունը՝ նշելով, որ այն իր խմբագրականներով և առաջնորդող հոդվածներով եղել և մնում է դաշնակցական գաղափարական աշխարհի և քաղաքական մտածողության հիմնական արտահայտիչը. «Դրոշակ» եղավ ՀՅԴ պաշտոնաթերթը և անոր գլխավոր բանբերը: «Դրոշակ»-ի առաջին երկու համարները լույս տեսած են Թիֆլիս 1891 մայիսին և սեպտեմբերին, երրորդը՝ Գալաց, ուր իբր աքսորական կը գտնվեին Ք. Միքայելյան, Ս. Զավարյան, 1892 փետրվարին: Չորրորդ թիվեն սկսյալ (1893 մարտ)՝ «Դրոշակ»-ը կը հրատարակվի Ժնև… (1898-1903): Քրիստափոր ստանձնեց անոր խմբագրապետությունը՝ օգնական ունենալով Մ. Վարանդյան, Է. Ակնունի, Ս. Մի-նասյան… «Դրոշակի»-ի հրատարակությունը պիտի ընդհատվեր 1915-1924 տարիներուն, ապա վերսկսվելու և շարունակվելու համար մինչև 1933՝ խմբագրությամբ Ս. Վրացյանի և Արշակ Զամալյանի»[14]:Դարասկզբին Քրիստափոր Միքայելյանի շուրջ «Դրոշակի» խմբագրությունում հավաքվել էին ՀՅԴ ազդեցիկ գործիչներ, տաղանդավոր գրողներ և հրապարակախոսներ: «Դրոշակին» աշխատակցել են ժամանակի ազգային գրականության նշանավոր դեմքերից երեքը՝ Ավետիս Ահարոնյանը (Ղարիբ), Միամանթոն (Ատոմ Յարճանյան) և Ավ. Իսահակյանը (Հայ-գուսան, Արտավազդ): ՀՅԴ-ի Հուշամատյանի «Երկրորդ ժամանակաշրջանի գործիչները» (1900-1914) շարքում Նիկոլ Աղբալյանի, Ռուբեն Զարդարյանի

---

[12] *Դրօշակ, Ժնև, 1895, № 11, էջ 4:*

[13] *Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Ե., 1979, էջ 26:*

[14] **Տասնապետեան Հր.,** *ՀՅԴ-ը իր կազմակերպումից մինչեւ Ժ ընդհանուր ժողովը (1890 -1924), Աթէնք, 1988, էջ 24-47:*

[15] *Յուշամատյան, ՀՅԴ-ն, հ. Ա, էջ 103:*

(Ասլան), Սիամանթոյի անունների կողքին գրված է. «Ավետիք Իսահակյան (Հայ-գուսան)՝ ծնած Ալեքսանդրապոլ: Քնարերգակ բանաստեղծ, արձակագիր: Կը անդամակցի ՀՅԴ-ը, քերթվածներ կը ձոնե հեղափոխականներուն...»[15]: Իսահակյանը զարմանալիորեն համատեղում էր և՛ բանաստեղծի. և՛ քաղաքական գործչի՝ իր առաքելությունը: Որպես ալեքսանդրապոլյան ՀՅԴ-ի՝ «Քարի» մասնաճյուղի ստեղծողներից մեկը՝ ակտիվ մասնակցություն է ունենում Արևմտյան Հայաստանի ազատագրական պայքարին. ձևավորում է Երկիր գնացող կամավորական խմբեր, օգնում հայթայթել դրամական միջոցներ, զենքեր: Գաղափարական գործչի իր առաքելությամբ մասնակցում է ՀՅԴ Երրորդ (1904, Սոֆիա) և Չորրորդ (1907, Վիեննա) ընդհանուր ժողովներին: Իհարկե, հայրենիքի առաջ ծառացած խնդիրներին մոտ լինելու և հարազատ ժողովրդին ծառայելու ձգտումն էր Իսահակյանին բերել ՀՅԴ: Բանաստեղծին բացառապես հետաքրքրում էին ազգային-ազատագրական գաղափարների իրագործման ծրագրերն ու նպատակները և հատկապես կուսակցության գործունեությունը հայրենիքին օգտակար լինելու սրբազան գործում: Իսահակյանը ՀՅԴ ընդհանուր ժողովում դեմ քվեարկեց ընկերվարությանը՝ արժանանալով քննա-դատական խոսքերի: Այդ մասին հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Ս. Վրացյանը. «Ավ. Իսահակյանը բոլորովին հռետոր չէր. խոսում էր կակազելով, բայց այս անգամ այնպես փայլուն կերպով ներկայացրեց իր հակաընկերվարական, նիցշեական, անիշխանական փիլիսոփայությունը, որ ամբողջ ժողովուրդը բուռն կերպով ծափահարեց...»[16]: Իր մղումների ու շարժառիթների մասին լավագույնս գրում է ինքը բանաստեղծը. «Ես ո՛չ ռամկավար եմ, ո՛չ ընկերվարական, ո՛չ էլ թշնամավարական: Ես ասում եմ՝ եղի՛ր մա՛րդ, անկա՛խ, ազա՛տ, անիշխա՛ն, և միայն քե՛զ, քե՛զ հետևիր...»[17]: Վրացյանը խանդավառությամբ հավաստում է, որ Իսահակյանը Կարինում սիրված բանաստեղծ էր, և նրա երգերը ամենքի բերանում էին. «Ավ. Իսահակյանը այն ժամանակ դեռ Հայ-գուսան էր...Վիեննայի ընդհանուր ժողովից Դաշնակցությունը դուրս եկավ ավելի համերաշխ և զորացած: Ավետիքը շարունակեց աշխատել «Քարի» կենտրոնական կոմիտեի մեջ, ի վերջո ձերբակալվեց, երաշխավորությամբ բաց թողնվեց բանտից և ահա մեր մեջ էր՝ Կարինում» (հ. 190-191): Իսահակյանի պարագայում դա պարզ էր ու բնական. չէ՞որ բանաստեղծը ժողովրդից էր ստանում իր կենսական ուժն ու կորովը, իսկ ժողովրդականությունը նրա պոեզիայի ամենաբնորոշ առանձնահատկությունն է. «Նա երգեր է հյուսել ժողովրդականի նման՝ պահպանելով ժողովրդականի բնավորությունը»[18]: Ակնհայտ է, որ անկախ

---

[16] **Վրացյան Ս.,** *Կյանքի ուղիներով, հ. Բ, Պեյրութ 1960, էջ 102:*

[17] **Ավ. Իսահակյան**, *Հիշատակարան, Ե., 1977, էջ 275: Այսուհետև «Հիշատակարանից» արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:*

[18] **Արզումանյան Ս.,** *Բանաստեղծության ազգային հողը, Ե., 1998, էջ 319:*

ներկուսակցական հարաբերություններից, Իսահակյանն արել է այն, ինչ թելադրել է միտքը, նպատակը, համոզմունքը: Այդ տարիներին նա ամբողջովին համակված էր ազգային-ազատագրական վեհ գաղափարներով և խորապես գիտակ-ցում էր հայրենիքում ստեղծված իրավիճակի ծանրությունը, ցավ ապրում իր ժողովրդին բաժին ընկած դառնությունների համար և երբեմն խոստովանում է, որ ապագայի անորոշությունը հոռետեսական տրամադրություններ է ստեղծում, իրեն դարձնում ավելի մտազբաղ, խանգարում կենտրոնանալ, նվիրվել սիրած գործին՝ բանաստեղծելուն. «Պեսիմիզմը, վիշտը թույն է, որով ամենաշատ վա րակվում են երիտասարդ կյանքերը…»(Հ, 273): Իրավիճակը, իրոք, հիասթափեցնող էր. 1899 թ. ապրիլի 8-ին Ալեքսանդրապոլից գրում է իր բարեկամ Արշակ Չոպանյանին. «Մի քանի տարի առաջ ես Եվրոպայում էի, հետո վերադարձա Հայրենիք՝ Կովկաս, ուր ձերբակալվեցի հայկական դատի առթիվ (ցարական կառավարությունից), մի քանի տարի բանտարկվելուց հետո (1896-1897) ուղարկեցին ինձ աքսոր. ամբողջ երեք տարի ես անկախ չէի… Հայ ժողովրդի մեջ ներքին դժբախտ անցքերի շնորհիվ տիրում է մի դառը հիասթափու-թյուն և դեպի գրականությունը, մամուլը, միտքը, հասարակական կյանքը. այժմ ամենքը՝ թե ինտելիգենտը և թե ժողովուրդը միայն իրենց տնտեսական շահերովն են կլանված… գրողի, մտածողի համար այստեղ օդ չկա… իսկ մեր հայ գրողները…խեղճերը…հացի խնդիր, դառը կարիք, ժողովրդի անտարբերությունը, կառավարու-թյան ճնշումներ, հալածանք…ուղիղն ասած՝ ուժ չկա ապրելու, հոգի չկա գրելու, խանդ, պաֆոս-ոչինչ չկա»[19]: Դառնացած է բանաստեղծը. մի կողմից՝ ուր գնալ, ինչ անել, մյուս կողմից՝ կարեվեր խոցված ժողովրդի՝ անվերջ տառապանքից ծնված անտարբերու-թյունը, «վեհ ընկերների» անդառնալի կորուստները: «Երանի ձեզ,-ասում էր Իսահակյանը Չոպանյանին,-որ Միցկևիչի[20] նման երազում եք հարազատ ժողովրդի վերածնությունը».[21] Ընդամենը երեք տարի առաջ Իսահակյանը լի էր մարտաշունչ տրամադրությամբ ու վճռականությամբ, հաստատակամ՝ համոզմունքներում. «Առաջին ու վերջին գործս պիտի լինի շա՛տ լավ ուսումնասիրել մեր հեղափոխությունը, գրականությունը, ժողովրդին, պիտի դուրս գամ ազգային բանաստեղծ, արտահայտիչ, էպոխայի մարգարե, առաք-յալ…» (Հ, 231): Ակնհայտ է, որ այդ տարիներին, երբ Իսահակյանը, ՀՅԴ շարքերում, մշտապես դեգերումների մեջ, անտեսելով դժվարություններն ու զրկանքները, փորձում էր իրապես օժանդակել ազգային-ազատագրական

---

[19] **Ավ. Իսահակյան,** *Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1979, էջ 23-24:*

[20] *«Ադամ Միցկևիչ-լեհ բանաստեղծ, ազգային-ազատագրական շարժման գործիչ (1798-1899), 1899թ. «Անահիտ» հանդեսում տպագրվել է «Տաղ երիտասարդության» բանաստեղծությունը: Միցկևիչին լայնորեն պրոպագանդել է Ա. Չոպանյանը: Միցկևիչի սոնետները թարգմանել են Հ. Թումանյանը, Դ. Վարուժանը, բալլադները՝ Ռ. Զարդարյանը, խորհրդային շրջանում՝ Գ. Էմինը, Պ. Սևակը և ուրիշներ» (ՀԱՀ, հ. 7, Ե., 1981, էջ 621):*

[21] **Չոպանյան Ա.**, *Երկեր, Ե., 1988, էջ 8:*

պայքարին, նրա ստեղծագործական միտքը ամբողջովին համակված էր հայոց ազատամարտի հերոսական դրվագներով: Իսկ այդ իմաստով նպաստավոր միջավայր էր «Դրոշակի» խմբագրությունը, ուր Երկրի տարբեր ծայերից գալիս էին լուրեր թուրք բարբարոսների վայրագությունների և նրանց դեմ քաջաբար մարտնչող ինքնապաշտպանական ջոկատների, ֆիդայիների ու նրանց անձնվեր առաջնորդների սխրանքների մասին: Իսահակյանն այնքան էր ոգեշնչված հերոսական ժողովրդի ցուցաբերած խիզախությամբ, որ ամբողջովին պատրաստ էր «հեղափոխող ուժ» լինել, անգամ կյանքը նվիրաբերել հայրենիքի փրկության գործին: Բայց և բանաստեղծը խորապես գիտակցում էր, որ այդ «ճամփեն շատ դժվար է, պետք է լինել հենի՝ մտածող ու ստեղծող[22], պետք է լինել գիտնական, փիլիսոփա ու բանաստեղծ… Կմտնեմ գործելու, կտանջվեմ ժողովրդի մեջ, նրա հետ նրա ցավով, լացով ու վշտով… Այսպես ես կմտնեմ հայ ժողովրդի մեջ՝ մարդկային վեհ գաղափարներով տոգորված կկռվեմ, կմեռնեմ» (Հ,189-190): Այս-պես էր Իսահակյանը տեսնում իր ճանապարհը: Առաջին հերթին դա պայմանավորված էր ժողովրդական տարերքից եկող նրա բա-նաստեղծական ձիրքով և, իհարկե, ժամանակի ոգով: Չմոռանանք, ինչպես Հր. Թամրազյանն է նկատում, Իսահակյանն ուներ գրական հսկային բնորոշ կյանքի վիթխարի զգացողություն[23]:

1900 թ. մայիսի 7-ին Ժնևում տոնում էին ՀՅԴ-ի և նրա կենտրոնական պաշտոնաթերթ «Դրոշակի» տասնամյակը: Իսահակյանն այդ օրերին Ցյուրիխում էր և շնորհավորական հեռագիր է ուղարկում Ժնև, ամիսներ անց «Դրոշակում» լույս է տեսնում «Գողթան քնար, որ ազատության» պոեմը [24] ՝ «Դաշնակցության տասնամյակին» ենթավերնագրով (պոեմի առաջին տողն ընդունվում է որպես պայմանական վերնագիր)[25], որը մասն էր կազմելու «Մասրսա Մանուկ» վիպասքի. ընդ որում, ըստ Իսահակյանի մտահղացման, «Մասրսա Մանուկ»ը պետք է լիներ հայ ազգային-ազատագրական շարժման էպոսը[26]: Էպոսի բնաբանը կարծես խտացումն է Իսահակյանի կյանքի ու գործունեության. «Սազը չի թողնում, որ կտրիճ դառնամ, Թուրը չի թողնում, որ գուսան դառնամ»: Ժողովրդական էպոսին բնորոշ երանգավորմամբ այս երկը վկայում է, որ բանաստեղծի «քնարը վաղնջական ժամանակներից եկող հայոց ազատասիրական երգի իսկական ժառանգորդն է»[27]: Իսահակ-յանը արդիականացրել, նոր շունչ է հաղորդել Գողթան գուսան-ների երգին, որ վաղուց է, ինչ լռել էր: «Դրոշակի» Հայ-գուսանը հնչեցնում է գուսանի քնարը, որ ազատության գովքը երգի Մասիս սարն ի վեր, որ «Գողթան քնարը նորից

---

[22] *Հենի-Հերոս, Գերմարդ (տե՛ս* **Նիցշե Ֆ.,** *նշվ աշխ.):*

[23] **Թամրազյան Հր.,** *Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Ե., 1986, էջ 326:*

[24] *Դրոշակ, 1901 - 1, էջ 4-6:*

[25] **Իսահակյան Ավ.**, *Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրություն, Ե., 2000, էջ 541:*

[26] **Իսահակյան Ավ**., *Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1974, էջ 31:*

[27] **Խաչատրյան Ավ.,** *Ավետիք Իսահակյանի հայրենասիրական պոեզիան, Ե., 1987, էջ 95:*

զնգզնգա»: Պոեմը կառուցելիս Իսահակյանը հարազատ է մնացել բանահյուսական ժանրերին բնորոշ զրույց-երկխոսության ձևին՝ երկխոսություն Գուսանի և ժողովրդի միջև: Ավիկ Իսահակյանը Գուսանի կերպարի մեջ մարմնավորված է տեսնում ՀՅԴ-ի շրջիկ քարոզիչներին հատուկ գծեր, որոնք Հայաստանի տարբեր շրջաններում ներկայացնում էին Արևմտահայաստանի ճշմարիտ դրությունը, ազատագրական պայքարի գաղափարարներ սերմանում՝ այդպիսով նպաստելով կամավորական ջոկատների կազմավորմանը[28]: Պոեմում Գուսանի և ժողովրդի զրույցի միջոցով հեղինակը խորը հուզականությամբ ներկայացնում է հայ ժողովրդի անվերջ տառապանքը, դաժան ժամանակներում հայրենիքի ողբերգական պատկերները: Գուսանի բանաստեղծական կերպարն ամբողջանում է որպես ազատագրական պայքարի գաղափարի զինվոր, որը գալիս է հայրենի երկրից, «կռվի կարմիր տեղերեն», սիրտը՝ «օձոտ ու խոցոտ», ու գնում է դեպի ժողովրդի սիրտը՝ այնտեղ «թեժ-կրակ, վրեժ-կայծակ» բորբոքելու: Ցավ ու ափսոսանք կա Գուսանի խոսքում, թե «Մեր աշխարհի ինչը մնաց, - Հուրը գնաց, Մուրը մնաց»: Ստեղծարար աշխատանքով ապրող խաղաղ ժողովուրդն անտուն ու անտեր թափառական բնավեր է դարձել. «Կյանքն էլ ոչ մի ելք չունի»: Հոգնել է ժողովուրդը «դարդի ծովեն»: Իսահակյանը դիմում է իր սիրած Արազի խորհրդանշական կերպարին: Բանաստեղծն հաճախ էր վշտի պահին խորհրդածում մայր Արաքսի հետ. ամիսներ առաջ նա գրում է. «Արաքսը հոգուս միջով հոսում է, հոսում է՝ վերան իր երազները՝ որպես մշուշ… Եվ Մասիսը հոգուս մեջ խրոխտ ու երազուն միշտ բազմած է… Եվ գագաթը աղամանդի պես միշտ փայլում է. դա իմ սերն է դեպի ձեզ, հայրենիքի լեռներ և դաշտեր, գետեր…» (Հ, 272): Ու զրնգում է Գուսանի մարտաշունչ երգը, մարտի հրավիրում ժողովրդին «Մասրսից մինչև Առնոս, Տավրոս…». խոցված սիրտը վրեժ է տենչում. «դուշմանի դեմ, Ո՛վ սիրտ ունի՝ թող ելնի»: Սա արդեն ազատագրական պայքարի մարմնացած գաղափար է, որի զինվորն էր դարձել Հայ հեղափոխական դաշնակցությունը: Բանաստեղծը պատգամում է համախմբվել մի դրոշի տակ՝ Դաշնակցության դրոշի, իսկ ՀՅԴ-ն «Դրոշակին» մաղթում է «սուրբ գործին» հավերժ ծառայելու առաքելություն՝ Հայու արևն ապրած կենա՛, //Հազա՛ր-հազա՛ր բարով, տարով: Գուսանի երազը տեսլանում է հավերժ ծածանվող «Դրոշի» տեսքով: Իսկ բանաստեղծն ինքը՝ որպես Հայ- գուսան, կշարունակի գնալ իր նախընտրած ճանապարհով՝ «Թափառել ժողովրդի մեջ, երգել նրա կյանքի բանաստեղծական կողմերը, այդ կողմերն ավելի բանաստեղծացնել, երազական շինել, երգել ժողովրդի կամքը, տենչը, իղձը, վրեժը, վիշտը…» (Հ, 277):

Այսպիսով, օտարության մեջ գտնվող վտարանդի բանաստեղծը դարձավ հայ ազատագրական պայքարի գաղափարակիրը՝ իր անմիջական մասնակցությունը բերելով ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրոշակի» աշխատանքներին:

---

[28] **Իսահակյանի Ավ.,** *նշվ.աշխ., 542:*

ПОЭТ-ИЗГНАННИК И ГАЗЕТА "ДРОШАК"

АБРААМЯН А. А.

Резюме

В конце XIX—начале XX вв. народы, находящиеся под гнетом Османской империи, стали жертвой жестокой политики Абдул-Гамида. Акции турецкого правительства в отношении западных армян подняли волну восстаний. В 1800-х гг. возникло движение гайдуков в Муше, Сасуне, в провинциях Васпуракан, Хыныс, Карин и других местах. Армянская революционная федерация Дашнакцутюн, основанная в Тифлисе в 1890 году, возглавила организацию национально - освободительного движения. Главным органом партии АРФ Дашнакцутюн стала газета "Дрошак". Многие известные армянские писатели—Аветис Агаронян (Гариб), Аветик Исаакян (Хай Гусан) и Сиаманто сотрудничали с газетой "Дрошак".

В 1900г. в честь десятилетнего юбилея на её страницах было опубликовано стихотворение Ав. Исаакяна "Лира Гохтна за свободу", в котором поэт призывал соотечественников объединиться под флагом АРФ, газета же "Дрошак" должна была служить этой "святой" цели.

NEWSPAPER "DROSHAK" AND THE POET IN EXILE

A. ABRAHAMYAN

Abstract

At the end of the 19th century and at the beginning of the 20th century, all nations under the power of the Ottoman Empire suffered Abdul Hamid's

brutal policy. The actions of the Turkish government in Western Armenia stirred up a wave of rebellion and in 1800s Hayduk movement rose in Mush, Sasun, Provinces of Vaspurakan, Khnus, Karin and in other places. Armenian Revolutionary Federation (ARF), founded in Tiflis in 1890, assumed the role of a leader in organizing the national liberation movement. "Droshak" newspaper became the party's highlight. Avetis Aharonian (Gharib), Avetik Isahakyan (Hay Gusan) and Siamanto, well-known Armenian writers of the time, contributed to "Droshak". In 1900, the newspaper published Av. Isahakyan's "Goght's lyre for freedom" poem marking the newspaper's tenth anniversary. In the poem, Isahakyan encouraged his compatriots to unite under the flag of ARF.